ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԿ(Բ)Կ ՊԱՅՔԱՐԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱԹԵԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հ. Մ. ՔԹՈՅԱՆ

*Աշխատավոր զանգվածների գաղափարական դաստիարակության գործում կոմունիստական կուսակցությունը կարևոր դեր է հատկացնում հակակրոնական պրոպագանդային**։ Դեռևս սովետական իշխանության առաջին տարիներին կրոնական նախապաշարումների դեմ ծավալված պայքարում կուսակցությունն առաջնորդվում էր Վ. Ի. Լենինի այն ցուցումով, որ աշխատավորական մասսաներին անհրաժեշտ է գինել աթեիստական գիտելիքներով. «Մեծագույն սխալ և ամենավատթարագույն սխալը կլիներ,— նշում էր Վ. Ի. Լենինը,— որ կարող է անել մարքսիստը, եթե կարծենք, թե բազմամիլիոն ժողովրդական (առանձնապես գյուղացիական և արհեստավորական) մասսաները, որոնց ողջ ժամանակակից հասարակությունը դատապարտել է խավարի, տգիտության և նախապաշարմունքների, կարող են այդ խավարից դուրս գալ միայն զուտ մարքսիստական լուսավորության ուղիղ գծով։ Անհրաժեշտ է այդ մասսաներին տալ ամենարազմազան նյութեր աթեիստական պրոպագանդայի վերաբերյալ, նրանց ծանոթացնել կյանքի ամենատարբեր ասպարեզներից բերած փաստերի հետ, մոտենալ նրանց և՛ այսպես, և՛ այնպես, որպեսզի հետաքրքրենք նրանց, արթնացնենք նրանց կրոնական քնից, թափահարենք նրանց ամենարազմազան կողմերից ամենատարբեր եղանակներով և այլն»[1]։*

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հանրապետությունում աշխատավորության աթեիստական դաստիարակությունը լայն և գիտական հիմքերի վրա դրվեց։ Նկատի ունենալով, որ աշխատավորության աթեիստական դաստիարակությունը հաջող կազմակերպելու կարևոր պայմանը հակակրոնական աշխատանքների ամենօրյա հետևողական ղեկավարությունն է, ՀԿ(բ)Կ Կենտկոմը կուսակցական կազմակերպությունների առջև խնդիր դրեց ուժեղացնել հակակրոնական պրոպագանդան՝ հենվելով բնագիտական և հասարակագիտական գիտությունների վրա, այն սերտորեն կապելով սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի հետ։ Աշխատավորության ազատագրումը կրոնի ազդեցությունից առաջին հերթին կախված էր սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերված հաջողություններից, քանի որ դրանք սոցիալ-տնտեսական հիմք կհանդիսանային աշխատավորությանը կրոնի ու եկեղեցու ազդեցությունից հեռու պահելու համար։ Բացի այդ, նկատի ունենալով աշխատավորության շրջանում տարվող

---

* *Հոդվածում քննվում է աշխատավորության աթեիստական դաստիարակության համար ՀԿ(բ)Կ մղած պայքարը 1928—1932 թթ.։*

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 270։

աթեիստական աշխատանքների կարևորությունը, 1928 թ. մարտին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտ-պրոպ բաժնին կից հակակրոնական հանձնաժողովը որոշում ընդունեց «Մարտնչող անաստվածների միություն» (ՄԱՄ) ստեղծելու մասին։

Հայաստանի հակակրոնական ճակատի աշխատողների համագումարը (1928 թ. հոկտեմբերի 30) հակակրոնական բոլոր կազմակերպությունների առջև խնդիր դրեց ուժեղացնել և խորացնել գաղափարական պայքարը բոլոր տեսակի աղանդների դեմ, որոնք ձգտում էին իրենց ազդեցության տակ առնել առաջին հերթին երիտասարդությանը։ Համագումարի ընդունած բանաձևում նաև նշվում էր, որ անհրաժեշտ է աշխատավորության աթեիստական դաստիարակության նպատակով տեղերում ստեղծել «անաստվածների բջիջներ», որոնք պետք է ակտիվ մասնակցություն ունենային աթեիստական կադրերի ստեղծման ու վերապատրաստման գործին և հետևողական, համբերատար ու համառ պայքար մղեին աշխատավորության աթեիստական դաստիարակության համար[2]։

«Անաստվածների միություններ» գավառային և շրջանային կենտրոններում, իսկ տեղերում «անաստվածների բջիջները» ոչ միայն պրոպագանդիստական կազմակերպություններ էին, այլև մարտական ջոկատներ՝ կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ սոցիալիզմի կառուցման և նոր կենցաղի ստեղծման գործում։ ՄԱՄ-ը կազմակերպում էր «անաստված» կոլտնտեսություններ, «անաստված» ցեխեր, «հակակրոնական դաստիարակություն», «անկրոն դաստիարակություն», «անաղոթք բուժում», «անհեքիմ բուժում» և այլն։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի ագիտ-պրոպ բաժինը 1928 թ. հունվարին նշեց, որ «հակակրոնական պրոպագանդայի բովանդակությունը պիտի կազմի պայքարը մատերիալիստական աշխարհայացքի համար, մերկացնելու կրոնի դասակարգային էությունը, լույս սփռելու այն բոլոր ուղիների ու միջոցների վրա, որոնցով իր գոյությունն է պահում կրոնական սիստեմը, մերկացնել դասակարգային կռվում կրոնի խաղացած հակահեղափոխական դերը»[3]։

Աթեիստական դաստիարակության հաջողության համար անհրաժեշտ էին պայմաններ ու միջոցներ և առաջին հերթին՝ կադրեր, որոնց ստեղծումը բավական դժվար ու լուրջ խնդիր էր։ ՀԿ(բ)Կ մեծ ջանքեր գործադրեց հակակրոնական պրոպագանդան բարձր հիմքերի վրա դնելու համար։ Աթեիստական որակյալ կադրեր պատրաստելու համար ստեղծվում էին սեկցիաներ, կազմակերպվում էին հատուկ դասընթացներ։ Այդ նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Երևանի քաղկոմի կուսակցական աշխատողի կաբինետին կից 1929 թ. մայիսին կազմակերպվեց հակակրոնական սեկցիա, որը մեթոդական կոնսուլտացիաներով և այլ միջոցներով օժանդակում էր «անաստված բջիջներին» և հակակրոնական խմբակների աշխատանքներին[4]։

«Մարտնչող անաստվածների միության» կենտրոնական խորհուրդը կազմակերպում էր հակակրոնական ակտիվի որակավորման դասընթացներ, որոնցում սովորողներին տրվում էին համապատասխան գիտելիքներ։ Ահա թե ինչ էր գրում ՄԱՄ-ի օրգան «Անաստված» ամսագիրը. «Մեր աշխատանքի գըլ-

---

2 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, գ. 240, կապ. 8, ց. 10, էջ 75—78։
3 Նույն տեղում, ց. 11, գ. 347, թ. 18։
4 «Անաստված», 1929, № 5—6, էջ 25։

խավոր պայմանը, դա իդեոլոգիական ֆրոնտի այդ բնագավառի ձեռնարկումների ուժեղացման անհրաժեշտությունն է, ինչպես նաև հին կենցաղային սովորությունների դեմ պայքարը, հակակրոնական գրականության հրատարակությունը, անաստվածների խմբակի ցանցի ուժեղացումը, հակակրոնական պրոպագանդիստական կադրերի պատրաստումը և այլ խնդիրներ»[5]։

Անհրաժեշտ էր հրաժարվել հակակրոնական պայքարի հախուռն բնույթից և նրա մեթոդների գուեհկացումից ու հակակրոնական ագիտացիան սերտորեն ղուդակցել առօրյա աշխատանքում ձեռք բերած ամեն մի հաջողության հետ։

ՀԿ(բ)Կ VI համագումարը (1929 թ. հունվար) նշեց, որ դասակարգային սուր պայքարի ընթացքում կուսակցական որոշ կազմակերպություններ տեսադաշտից դուրս են թողել աշխատավորության աթեիստական դաստիարակության գործը և ինքնահոսի մատնել հակակրոնական պրոպագանդան։ Նման աշխատանքի ոճն ու անհոգ մոտեցումը ճանապարհ էին հարթում բուրժուական գաղափարախոսության ակտիվացման համար[6]։

Հանրապետության տնտեսական զարգացումը շարունակ նպաստում էր մարդկանց հոգևոր կյանքի վերափոխմանը և գնալով մասսայական բնույթ էր ստանում եկեղեցիների վերածումը համապատասխան կուլտուրական օջախների[7]։ Աշխատավորության աստիճանական հեռացումը կրոնից, ամենից առաջ հետևանք էր նրա կենցաղի ու կուլտուրայի արմատական փոփոխման։ Հին կենցաղի վերացմանը զուգընթաց առաջանում էր նոր, սոցիալիստական կենցաղ։ Դրա վկայությունը հանրապետության գյուղերում և քաղաքներում նոր ձևով պսակադրության, ծննդի, կոլեկտիվ հարսանիքների, կարմիր կնունքների, հոբելյանական մեծարումների և այլ արարողությունների կատարումն էր։ Հին կենցաղի աստիճանաբար վերացումն իր հերթին նպաստեց աշխատավորության սոցիալիստական գիտակցության և աշխատանքային կարգապահության բարձրացմանը։

Ժողովրդական լայն մասսաների ազատագրումը կրոնից դրսևորվում էր մասնավորապես նրանով, որ աշխատավորները հրաժարվում էին նոր կենցաղի հետ անհամատեղելի կրոնական տոներից, դրան մեծապես օժանդակում էր նաև գյուղատնտեսական արտադրության մեջ տեխնիկայի օրըստօրե լայնորեն ներդրումը։

Սոցիալիստական շինարարության և գյուղի համատարած կոլեկտիվացման հետ միասին հանրապետությունում լայն թափ ստացավ սոցմրցությունը, որը թափանցում էր տնտեսական ու կուլտուրական կյանքի բոլոր բնագավառները։ «Ալավերդու Շամլուղի հանքերի 500 բանվորներ որոշել են Քրիստոսի ծննդյան օրը աշխատել։ Վաղարշապատի գավառային բյուրոն, հունվարի 6-ը՝ Քրիստոսի ծննդյան օրը հայտարարել է աշխատանքային օր։ Այդպես են վարվել Ղափանի բանվորները, Երևանի կաբելի, Բանկոոպի և այլ կազմակերպություններ»[8]։ Այս փաստերը վկայում են, որ սոցմրցությունը վերելք էր առաջ բերել ինչպես տնտեսական ու կուլտուրական, այնպես էլ հակակրոնական

---

5 Նույն տեղում, 1928, № 5—6, էջ 37։

6 Մշի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 6, թ. 61—62։

7 «Անաստված», 1928, № 4, էջ 30, 1929, № 1—2, էջ 20—21, № 4, էջ 22—23, «Մաճկալ», 18. XII. 1928, 20. XII. 1928։

8 «Խորհրդային Հայաստան», 26. I. 1929։

պրոպագանդայի բնագավառում։ «Երևանի մի շարք հիմնարկ-ձեռնարկություններ (Հայպոլիգրաֆի, Պետհրատ, Մխախոտի գործարան, Կարբիդի, Արարատ, Ձեթ-օճառ, Կաշեգործարանի, Հայանտառտրեստ, Սննդի և հացի) որոշել են այս տարվա (1930 թ.—Հ. Ք.) հունվարի 1—6-ը հայտարարել աշխատանքի օր և աշխատավարձը հատկացնել գյուղի կոլեկտիվացման բանբրիգագայի ֆոնդին»[9]։

Գյուղի և քաղաքի միջև փոխադարձ կապի ամրապնդումը պայման էր ստեղծում ՄԱՄ-ի գործունեության ակտիվացման համար. օրինակ, Երևանի պահածոների գործարանը, որն ուներ 650 աշխատող, այդ թվում 50 հոգուց բաղկացած ՄԱՄ կազմակերպություն, սոցմրցման է հրավիրում հանրապետության արդյունաբերության մի շարք բնագավառների բանվոր-ծառայողներին։ Սոցմրցման պայմանագրում նախատեսվում էր. ՄԱՄ-ի անդամների թիվը 50-ից հասցնել 500-ի, ժողովների հրավիրում, երեկոների կազմակերպում, լսել զեկուցումներ կրոնի ու գիտության մասին, ստեղծել անաստված խմբակ և սիստեմատիկաբար աշխատանք տանել բանվոր-ծառայողների շրջանում, կազմակերպել հակակրոնական կինոնկարների ցուցադրում, օգնել շեֆ գյուղին համապատասխան գրականությամբ, գյուղում ստեղծել ՄԱՄ-ի բջիջ, ամիսը մեկ անգամ կազմակերպել զեկուցում, կամավոր նվիրատվություն գյուղին, պայքարել «աջ» և «ձախ» թեքումների դեմ և բազմաթիվ այլ միջոցառումներ[10]։

Հակակրոնական պրոպագանդան մեծ ծավալ էր ստացել նաև ուսումնական հաստատությունների, դպրոցների շեֆ կազմակերպությունների աշխատանքներում։ Բարձրագույն ուսումնական հաստատությունների ՄԱՄ-ի բջիջները կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների և արհկոմների անմիջական ղեկավարությամբ լայն հակակրոնական աշխատանք էին կատարում ոչ միայն գյուղերում, այլև քաղաքներում՝ մանավանդ արձակուրդների ժամանակ։

Հակակրոնական աշխատանքներ էին տարվում նաև բանակում, որտեղ ստեղծվում էին «անաստվածների բջիջներ»։ Այսպես, օրինակ, հեծյալ գնդի «անաստվածների բջիջը» ակտիվ մասնակցություն է ցույց տվել հակակրոնական բոլոր միջոցառումներին[11]։ Նման բջիջներ գոյություն ունեին նաև այլ զորամասերում, որոնց «անաստվածների բջիջների» անդրանիկ կոնֆերանսը 1929 թ. ապրիլին քննարկեց կրոնի սոցիալական էությունը և հակակրոնական աշխատանքների վիճակը։ Կոնֆերանսի որոշման մեջ ասված էր, որ ամենից առաջ պետք է հակակրոնական պայքար մղել հավատացյալ մարտիկների շրջանում[12]։

Աշխատավորության աթեիստական դաստիարակության բնագավառում մեծ անելիքներ ունեին նաև արհմիությունները, որոնց առաջ կուսակցությունը խնդիր դրեց պայքար ծավալել կենցաղի արմատական ու վճռական վերափոխման համար։ ՀամԿ(բ)Կ XVI համագումարի բանաձևը արհմիություններից

---

9 «Մաճկալ», 5. i. 1930։

10 «Անաստված», 1931, № 3, էջ 17։

11 Նույն տեղում, 1928, № 5—6, էջ 35։

12 Նույն տեղում, 1930, № 4, էջ 16։

պահանջում էր «ճիշտ կազմակերպել և ուժեղացնել հակակրոնական պրոպագանդան»[13]։

Սոցիալիստական շինարարության հաջողությունները և գիտության ու կուլտուրայի նվաճումներն իրար հետևից փշրում էին կրոնական նախապաշարումները։ Դա զգում էին նաև եկեղեցու որոշ սպասավորներ, որոնք խզում էին կապերը եկեղեցուց, անցնում ազնիվ աշխատանքի ու մասնակցում սոցիալիստական շինարարությանը։ Այսպես, օրինակ, Ղամարլուի շրջանի Բուրաստան գյուղի երեցփոխ Մ. Թարվերդյանը գրում է. «Համոզվեցի, որ նման եկեղեցական սովորությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ մասսաներին խաբելու և կեղեքելու միջոց։ Ես գիտակցելով այդ գործի էությունը, հրաժարվում եմ երեցփոխ լինելուց, ինչպես նաև կրոնական համայնքից։ Պատրաստվում եմ անցնել մեր ենթաշրջանի «Անաստված» խմբի մեջ և տանել հակակրոնական ագիտացիա։ Որպես այսպիսին, ես կոչ եմ անում, բոլոր ինձ նմաններին... թող գուրս դան և գիտակցաբար հրաժարվեն կրոնական նախապաշարմունքներից»[14]։ Նույն կերպ է վարվել նաև Լոռի-Փամբակի գավառի Քյոլլուջա գյուղի քահանա Տեր-Սուքիասյանը. «Այսօր այլևս չեմ կարող շրջել ու գործել այդ գարշելի սևագույն ֆարաջայի տակ և խաբել խեղճ գյուղացիությանը։ Այսօր բացահայտ դուրս եմ գալիս հայտարարելու, որ կրոնն ու եկեղեցին ոչ այլ ինչ են, եթե ոչ մասսաներին խաբելու, կեղեքելու և բթացնելու միջոց։ Ես այդ հասկանալով ու գիտակցելով, հրաժարվում եմ կղերականների համքարությունից և կրոնից։

Այդ անելուց հետո մտնում եմ մեր գավառի անաստվածական խմբակի մեջ և տանելու եմ հակակրոնական պրոպագանդա։ Ապա կոչ եմ անում բոլոր նրանց, որոնք մի անգամ գիտակցաբար, թե անգիտակցաբար ընկել են իմ վիճակի մեջ, դարձել «տեր հայր», հիմա «խորոց սրտի» ընդունեն կրոնի կեղծիք ու ստություն լինելը, կրոնի վնասակար լինելը, կղերականության անպիտան ու թալանչի դերը, հետևեն ինձ ու հրաժարվելով-հրաժարվեն իրենց իբր թե «սուրբ կոչումից»[15]։

1928—1929 թթ. հոգևոր ծառայությունից հրաժարվեցին նաև Զանգեզուրի գավառի Հայկավան գյուղի քահանա Կ. Կարապետյանը, Լոռի-Փամբակի գավառի Նալբանդ գյուղի տիրացու Ավետիս Սանթրոսյանը[16], Ն. Ղամարլուի քահանա Ղևոնդ Տեր-Խաչատրյանը[17], Լոռի-Փամբակի գավառի Մղարթ գյուղի քահանա Աբրահամ Մամաջանյանը, Դիլիջանի գավառի Սևքար գյուղի քահանա Ղևոնդ Ղալումյանը, Դարալագյազի գավառի Հերվեներ գյուղի քահանա Սիմոն Ղամբարյանը, Փաշալու գյուղի տիրացու Զաքար Ստեփանյանը և Լոռի-Փամբակի գավառի Համամլուի շրջանի Թափանլու գյուղի քահանա Նիկողոս Սարգսյանը[18]։

Այսպիսով, հակակրոնական պրոպագանդան արագացրեց մարդկանց հեռացումը կրոնից։ Դրա վկայությունն էր նաև այն, որ 1928 թ. վերջին հակա-

---

13 «ՍՄԿԿ-ն բանաձևերում», մաս III, Երևան, 1955, էջ 87։

14 «Մաճկալ», 1. I. 1928։

15 «Անաստված», 1928, № 7—8, էջ 21։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում, № 9—10, էջ 21։

18 Նույն տեղում, 1929, № 1—2, էջ 20—21։

կրոնական պրոպագանդա մղող կազմակերպությունների անդամների թիվը կազմում էր 10.000, 1929 թ.՝ 13.000[19], իսկ 1930 թ.՝ 40.000 մարդ[20]։ Փաստերը ցույց են տալիս, որ 1931—1932 թթ. ՄԱՄ-ի շարքերն ավելի են ստվարացել և ստեղծվել են նոր բջիջներ, որոնց մեծ մասամբ անդամագրված էին անկուսակցականները։

Բարձրացնելով հակակրոնական պրոպագանդայի որակը, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները, ինչպես նաև խրճիթ-ընթերցարաններում, ակումբներում, կարմիր անկյուններում և այլ տիպի կուլտուր-լուսավորական օջախներում գործող խմբակները զգալի աշխատանքներ կատարեցին նաև կրոնի սոցիալ-տնտեսական ու դասակարգային հետադեմ էությունը բացահայտելու գործում։ Գյուղերում կազմակերպվում էին հակակրոնական երեկոներ, որտեղ կարդացվում էին աթեիստական թեմաներով դասախոսություններ, անցկացվում զրույցներ, կազմակերպվում էքսկուրսիաներ, լրոսանքներ, ցուցահանդեսներ։

Բնակչության գիտա-աթեիստական դաստիարակության գործում մեծ դեր էր խաղում նաև մամուլը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. մարտի «Հակակրոնական պայքարի խնդիրների մասին» որոշման մեջ նշված էր, որ կրոնի քողի տակ, եկեղեցու միջոցով իրականացվող հակասովետական ամեն մի ոտնձգություն անհրաժեշտ է մամուլի միջոցով բացահայտել ու մերկացնել։ Մամուլում լույս տեսած հոդվածներում վեր էին լուծվում մեր երկրի ձեռք բերած հաջողությունների հիմնական պատճառները և ցույց տրվում, որ դրանք ոչ թե աստծո պարգև են, այլ մարդու աշխատանքի արդյունք։

Թերթերի և ամսագրերի էջերում պարբերաբար տարբեր բնույթի հոդվածներով հանդես էին գալիս գիտնականներ, գրողներ, սովետական, կուսակցական աշխատողներ, բանվորներ, գյուղացիներ, բժիշկներ, գյուղատնտեսներ, ուսուցիչներ, որոնք գիտության, տեխնիկայի, լուսավորության, արվեստի, արդյունաբերության, գյուղատնտեսության ասպարեզում ձեռք բերած հաջողությունների հիման վրա բացահայտում էին կրոնի, եկեղեցու ու հոգևորականության հետադեմ էությունը։

Աշխատավորության աթեիստական դաստիարակության գործում կուսակցությունը անհրաժեշտ ուշադրություն դարձրեց կենդանի, աշխույժ դասախոսությունների ձևով մղվող հակակրոնական մասսայական պրոպագանդային։ Այս ուղղությամբ 1928 թ. խոշոր աշխատանք կատարեց ՀԿ(բ)Կ Երևանի քաղկոմի ագիտ-պրոպ բաժինը, որը գիտա-աթեիստական պրոպագանդայի դրվածքը բարելավելու համար օգտագործում էր զանազան միջոցներ։ Այդ նպատակով բաժինը կազմեց և հրատարակեց «Գյուղացիների հակակրոնական խմբակների պարապմունքների ծրագիրը»։ Ծրագրում նախատեսված էր պատմա-հասարակագիտական ու բնագիտական 13 պարապմունք՝ 4—5 ամիս տևողությամբ։ Նշված էին 13 հիմնական թեմաներ. «Գյուղացիությունն ու կրոնը», «Ո՞ւմ է հարկավոր հավատալ աստծուն», «Աստվա՞ծ է արդյոք ստեղծել աշխարհը և ի՞նչ են բնության օրենքները» , «Կյանքի և մարդու ծագումը», «Կրոնը և բժշկականությունը», «Գյուղի սոցիալիստական շինարարությունը և կրոնը»,

19 «Ավանգարդ», 6. I. 1929։

20 «Անաստված», 1930, № 18, էջ 7։

«Կրոնը և գյուղական կենցաղը» և այլ հարցեր։ Նման ծրագիր էր մշակվել նաև քաղաքի խմբակների համար[21]։

Բնակչությանը հակակրոնական գրականությամբ ապահովելու գործը բարելավելու մասին է վկայում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. դեկտեմբերի որոշումը «Մասսայական ընթերցողներին գրքով ապահովելու մասին»։ Բացի այդ, 1929 թ. հունիսին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը հակակրոնական պրոպագանդան ուժեղացնելու համար հրավիրեց խորհրդակցություն, որը որոշում ընդունեց հակակրոնական պրոպագանդայի ու աթեիստական դաստիարակության գործին օժանդակելու համար միջոցներ առանձնացնելու մասին[22]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը, ելնելով այդ որոշումներից, համապատասխան միջոցառումներ մշակեց աշխատավորությանը հակակրոնական գրականությամբ ապահովելու համար։

Հակակրոնական պրոպագանդայի բնագավառում կուսակցության հիմնական խնդիրներից մեկը կրոնի ծագումն ու պատմությունը լուսաբանող գրականության հրատարակումն էր, քանի որ եղածը չէր բավարարում մասսայական ընթերցողի պահանջը։ Բանվորին ու գյուղացուն անհրաժեշտ էին մատչելի բրոշյուրներ, որոնք ամփոփ լուսաբանեին երկրի ու կյանքի ծագման և մարդկային հարաբերությունների էության հարցերը։ Այդ նպատակով 1931 թ. սեպտեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի «Հակակրոնական պայքարի խնդիրների մասին» ընդունված որոշման մեջ նշված էր. «Հանձնարարել Պետհրատին հրատարակել մի շարք մասսայական հակակրոնական բրոշյուրներ և պլակատներ»[23]։

Կուսակցության գաղափարական ու դաստիարակչական աշխատանքն ուժեղացնելու գործում կարևոր դեր խաղացին Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունները։ Հրատարակվել էին նաև Ի. Ստեպանովի «Մաքուր կրոնի մասին», «Հոգու հանդերձյալ կյանքի, աստծու և անմահության մասին», Եմ. Յարոսլավսկու «Աստվածաշունչը հավատացյալների ու անհավատների համար», Պ. Պլասենիկոյի «Աստված կա՞ արդյոք», Ռ. Գաբրիելյանի «Բնական երևույթ թե՞ հրաշք», «Կյանքը մարմնից դուրս», Վ. Պետրոսյանի «Կորչի զատիկը, կեցցե հնգամյակը 4 տարում» աշխատությունները և այլ հակակրոնական բնույթի գործեր։ Բայց բնագիտական թեքում ունեցող եղած գրականությունը դեռևս ի վիճակի չէր լիովին լուծելու հակակրոնական պրոպագանդայի հարցերը։ Անհրաժեշտ էր ստեղծել նաև լիարժեք հակակրոնական գեղարվեստական գրականություն, որտեղ իր ամբողջ էությամբ երևար նոր մարդը, սոցիալիստական շինարարությանը ակտիվորեն մասնակցող, կրոնից ու եկեղեցուց հեռու կանգնած բանվորն ու գյուղացին։

«Պայքարը կրոնի դեմ պայքար է կուլտուրայի համար» նշանաբանով էին աշխատում բոլոր հասարակական կազմակերպությունները կուլտուրական հեղափոխության բնագավառում։ Սակայն կուլակությունը, նեպմանները և եկեղեցին, կրոնական տոների միջոցով փորձում էին խափանել այդ աշխատանքները։ Նրանք քարոզում էին գյուղացիներին հեռու կանգնել սոցիալիզմի շի-

---

21 Նույն տեղում, 1928, № 4, էջ 13։

22 «Вопросы научного атеизма», М., 1973, էջ 200:

23 «Անաստված», 1931, № 9—10, էջ 4։

նարարությունից, այսինքն՝ կոլեկտիվ տնտեսություն մտնելուց, կոմկուսակցությունից, կոմերիտմիությունից, կուլտուրական միջոցառումներից և այլն։ Դա նրանց երբեմն հաջողվում էր։ Կուլակների և եկեղեցու գործունեության հետևանքով մի շարք գավառներում որոշ գյուղացիներ ոչ միայն դիմադրում էին եկեղեցու վերածմանը կուլտուրայի օջախի, այլև համոզում էին իրենց որդիներին՝ հեռանալու կոմերիտմիությունից։

Նմանօրինակ երևույթները կանխելու համար «Մաճկալ» թերթը ընդգծում էր մարդկանց եկեղեցու ու հոգևորականության ազդեցությունից հեռու պահելու անհրաժեշտությունը, կոչ էր անում հնգամյակը իրականացնել չորս տարում, կրոնական տոները դարձնել աշխատանքի, ինդուստրացման օրեր և այլն[24]։

Կուսակցությունը աշխատավորության աթեիստական դաստիարակության համար ձեռնարկեց համապատասխան միջոցառումներ և հետևողական պայքար մղեց անցյալի ամեն տեսակի մնացուկների դեմ։ 1931 թ. հունվարի 5-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումով Երևանի բոլոր ակումբներում կազմակերպվում են զեկուցումներ՝ «Հակածննդյան կամպանիայի և հակակրոնական պրոպագանդայի խնդիրները» թեմայով։ «Բոլոր զեկուցումներն անցան քաղաքի աշխատավորության ակտիվ մասնակցությամբ։ Դահլիճները լեփ լեցուն էին, ըստ տվյալների այդ երեկոյին մասնակցել են 10—12 հազար մարդ, իսկ հունվարի 1—6՝ 20 հազար, որտեղ ընդունված բանաձևերը շեշտում են հակակրոնական աշխատանքների աշխուժացման, կրոնի դեմ պայքարն էլ ավելի սրելու, բոլոր թեքումների և գլխավոր վտանգ աջ օպորտունիզմի դեմ անխնա պայքարը շարունակելու և այլ կարևոր քաղաքական նշանակություն ունեցող խնդիրների շուրջը»[25]։

Ամենուր գործարաններում, ֆաբրիկաներում տեղի էին ունենում միտինգներ, ժողովներ, որտեղ բանվորները հանդես էին գալիս կրոնական տոները աշխատանքային օր դարձնելու պահանջով։ Այսպես, օրինակ, «Երևանի միացյալ բանվորական ակումբում հակակրոնական ֆրոնտը անցավ հարյուրավոր բանվորների մասնակցությամբ, ընդունելով համապատասխան բանաձև։ Դեռ ապրիլի 1-ից ակումբի կուլտ-խումբը սկսել է սիստեմատիկ հակակրոնական զեկուցումներ տալ, ցուցադրել հակակրոնական կինոնկարներ և տալ ներկայացումներ, որոնց մասնակցեցին մինչև 5725 հոգի»[26]։

Գյուղացիությանը եկեղեցուց կտրելու համար կրոնական տոների ժամանակ կազմակերպվում էին «կարմիր կնունքներ» և հարսանիքներ։ Հակակրոնական աշխատանքների մեջ մեծ տեղ էր տրվում նաև հավաքույթներին, ցերեկույթներին ու երեկույթներին, որտեղ կատարվում էին հակակրոնական երգեր, արտասանություններ, հակակրոնական թեմաներով պատմվածքների ընթերցումներ և այլն։

1931 թ. դեկտեմբերի 27-ին ՀԿ(բ)Կ Երևանի քաղկոմի ընդունած հակածննդյան կամպանիայի անցկացման ծրագրով նախատեսվում էր 1932 թ. հունվարի 1—5-ը կազմակերպել զեկուցումներ՝ «Հակակրոնական կամպանիան և 1932 թ. ավարտական տարվա խնդիրները» թեմայով։ Դրա հետ միա-

---

24 «Մաճկալ», 21. II. 1930։

25 «Անաստված», 1931, № 1, էջ 17։

26 Նույն տեղում, 1931, № 4, էջ 14։

սին նախատեսվում էր կազմակերպել երեկոներ, ցերեկույթներ, ցուցադրել կինոնկարներ, կարդալ գիտական դասախոսություններ, կատարել քիմիական, ֆիզիկական փորձեր, կազմակերպել ֆիզկուլտ խաղեր, կուլտարշավ, այցելել ենթաշեֆ գյուղեր։ Հակակրոնական ակտիվի պատրաստման նպատակով 1929 թ. մայիսին ՄԱՄ-ի Երևանի խորհուրդը բացեց եռամսյա կուրսեր։

Աշխատավորության աթեիստական դաստիարակության գործում խոշոր դեր խաղաց նաև հակակրոնական թեմատիկայով պիեսների ցուցադրումը։ Սովետահայ թատրոնի առջև խնդիր էր դրված իր խաղացանկում տեղ տալ սովետական մարդու հոգեբանությունն ու կենցաղը ռեալիստորեն պատկերող գործերին։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումներով աշխատավորության աթեիստական դաստիարակության ու կուլտուրայի մակարդակի բարձրացման նպատակով դեռևս 1927 թ. ստեղծվել էր Հայաստանի պետական գյուղշրջիկ թատրոնը, որը մինչև 1932 թ. տվել էր 899 ներկայացում. դրանք դիտել էին 200 հազար մարդ[27]։

1928 թ. հունիսից սկսեց գործել Սովետական Հայաստանի լուսժողկոմատի կազմակերպած պետական շրջիկ թատրոնը։ Այն իր գոյության առաջին 5 տարում տվել է 875 ներկայացում, որը դիտել են մոտ 180.000 հանդիսական։ Թատրոնի դերասանները, բացի ներկայացումներից, հակակրոնական աշխատանք էին տանում ազգաբնակչության մեջ։ Աշխատավորության աթեիստական դաստիարակության գործում խոշոր դեր խաղացին նաև Երևանի, Լենինականի պետական թատրոնները։

1928—1932 թթ. աշխատավորության աթեիստական դաստիարակությանն ու նրանց ակտիվության բարձրացմանը մեծ չափով նպաստեցին նաև կինոնկարների ցուցադրումն ու ռադիոն։ Հանրապետությունում ստեղծված ռադիոկինոսիրողների խմբերը առաջին հնգամյակում աշխուժություն մտցրին բնակչության կուլտուրական ու հոգևոր կյանքի մեջ։ Ամենից առաջ նրանք պայքարում էին բուրժուական և կրոնական մնացուկների դեմ։ Կինոն մարդկանց հոգեկան աշխարհի վրա ներգործող վիթխարի միջոց էր և մտել էր աշխատավորության կենցաղի մեջ։ Լայն ընդունելություն էին գտել այնպիսի կինոնկարները, որոնք պատկերում էին ժողովրդի կենցաղը, սովորությունները, ծեսերը։ Դրանցից էին «Նամուսը», «Անուշը», «Շոր ու Շորշորը», «Զարեն»։

Աշխատավորության աթեիստական դաստիարակության համար կարևոր նշանակություն ուներ նաև ռադիոն, որը հսկայական հեղաշրջում մտցրեց քաղաքի ու գյուղի կյանքի մեջ։ Հակակրոնական թեմաներով ռադիոհաղորդումները հնարավորություն էին տալիս աթեիստական պրոպագանդան դնելու ավելի լայն հիմքերի վրա։ Ռադիոյով մղվող աթեիստական պրոպագանդան արագացրեց մարդկանց հեռացումը կրոնից, ամրապնդեց աշխատավորության աթեիստական դաստիարակության գործում ձեռք բերված հաջողությունները։ Այդ հաջողությունների մասին ՀամԿ(բ)Կ XVI համագումարի բանաձևում նշված էր. «Կուսակցությունը պետք է ամրացնի և զարգացնի այն զգալի հաջողությունները, որ ձեռք են բերվել ռեակցիոն ազդեցությունից մասսաներին ազատագրելու գործում»[28]։

---

27 «Սոցիալիստական գյուղատնտեսություն», 1. IV. 1933։

28 «ՍՄԿԿ-ն բանաձևերում», մաս III, էջ 21։

Չնայած ձեռք բերված հաջողություններին, աթեիստական պրոպագանդայի գործում թույլ էին տրվում նաև սխալներ։ Դրանք կանխելու գործում կարևոր դեր խաղաց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. սեպտեմբերի 17-ի շրջաբերականը, որը բոլոր քաղկոմներին և շրջկոմներին առաջարկում էր վճռական պայքար մղել հակակրոնական աշխատանքներում կուսակցական գծից շեղվելու դեմ, վճռականորեն հրաժարվել հոգևորականությանը վիրավորելուց, հավատացյալների նկատմամբ բռնություն գործադրելուց, եկեղեցիները բռնի փակելուց[29]։

1928—1932 թթ. ՀԿ(բ)Կ իրականացրած միջոցառումները աշխատավորների աթեիստական դաստիարակության համար ունեցան նշանակալից արդյունքներ. մասսաներին հեռու պահելով եկեղեցու և հոգևորականության աղդեցությունից, դրանք միաժամանակ զգալապես նպաստեցին աշխատավորներին սոցիալիստական շինարարության մեջ ակտիվորեն ընդգրկելու և կոմունիստական կուսակցության շուրջը համախմբելու գործին։

БОРЬБА КП(б) АРМЕНИИ ЗА АТЕИСТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ ТРУДЯЩИХСЯ

А. М. КТОЯН

Резюме

Коммунистическая партия Армении в 1928—1932 гг. развернула широкую деятельность в области атеистического воспитания трудящихся. В этом направлении большую работу проделали местные партийные, комсомольские и общественные организации, боровшиеся за искоренение религиозных предрассудков прошлого в сознании трудящихся масс. Благодаря этим мероприятиям начался процесс массового отхода людей от религии и церкви, что и способствовало формированию их научного мировоззрения.

---

29 *ՄԼԻ արխիվ, ֆ. 1, գ. 9, ց. 14, թ. 249—250։*